

Ա. Ս. Սահակյան

Ազաթանգեղոսի քաղկեդոնական տարբերակը

(Ներկայացված է ՀՀ ԳԱԱ թղթ. անդ. Լ. Հ. Աբրահամյանի կողմից 31/XI 2022)

Բանալի բառեր. *Ազաթանգեղոս, քաղկեդոնական եկեղեցի, խմբա-
գրություն, հունարեն թարգմանություն, վարք, Գրիգոր Լուսավորիչ*

Հայ քաղկեդոնական եկեղեցական գրական հայտնի վկայությանը («Նարրացիո») ավելանում է հունարեն և արաբերեն թարգմանված ծավալուն մի երկ, որը ոչ այլ ինչ է, քան մայր Ազաթանգեղոսի այլընտ-րանք՝ գրված հայերեն VI դ. վերջին տասնամյակի սկզբներին և թարգ-մանված հունարեն, հավանաբար ոչ շատ ուշ՝ VII դ. սկզբներին և հայտնաբերված Ժ. Գարիտի կողմից [1, 2]: Եթե հաշվի առնենք, որ մայր Ազաթանգեղոսը տարբեր չէր ընկալվում «Հենոտիկոնից», որը դավանաբանորեն ընդունում էր առաջին երեք տիեզերածոփոկները, ապա դժվար չէ ի մի հավաքել և մեկնաբանել Ազաթանգեղոսի քաղ-կեդոնական տարբերակի և մայր Ազաթանգեղոսի միջև եղած տար-բերությունները կետ առ կետ: Ներկայացնում ենք դրանցից մի քանիսը:

1. Ինչպես հայտնի է մայր Ազաթանգեղոսից (§ 735-737), Մայր տաճարի և երեք վկայարանների կառուցման տեսիլում տեղի ընտրու-թյան ցուցումները համընկնում են Վաղարշապատի չորս սրբավայ-րերի հետ: Իսկ ըստ քաղկեդոնական հայացքի՝ տեղի է ունեցել պատ-մական իրականության աղավաղում, որովհետև III-IV դդ. Մեծ Հայքի մայրաքաղաքը ոչ թե Վաղարշապատն էր, այլ Արտաշատը: Դրա համար էլ «Էջմիածնակենտրոն» մտածողությունը ջարդելու լավ առիթ է տվել սրբավայրի կառուցման տեղի ընտրության վիպական մոտիվը, որովհետև կառուցման տեսիլում կենտրոնական պլան է մղվել Ար-տաշատը:

«Ինձ այս գիշեր շատ զարմանալի տեսիլք երևաց, որ երկինքը խորանակերպ բացվել է... իսկ Արտաշատ քաղաքի հենց մեջտեղը՝ թագավորական խարիսխ, ոսկե խարիսխի վրա հրեղեն սյուն, բոց էր բարձրանում և ամեն ինչ լուսավորում. (սյան) վրա ամպե թակադաղ էր լուսակերպ, իսկ թակադաղի վերևում փայլատակում էր նշանը խաչի (§ 77): Սա քաղաքի (Արտաշատի – Ա. Ս.) մեջտեղում էր, իսկ մի այլ տեղում (Վաղարշապատում – Ա. Ս.)՝ արյան գույնի երեք թագավորական խարիսխ և հրեղեն սյուներ, բայց սյուները ուղիղ (շարքով) չէին կանգնեցված, այլ մեկը՝ արևելյան կողմում, մյուսը՝ հյուսիսային, իսկ երրորդը՝ արևմտյան կողմում: Պատվական խաչի նշանը նմանապես երեք սյուների վրա էր երևում և փայլատակում» (§ 78):

Փաստորեն խմբագիրը պարզորոշ ցույց է տալիս, որ կենտրոնական սրբավայրը մայրաքաղաք Արտաշատում է, իսկ սրբուհիների երեք վկայարանները՝ Վաղարշապատում: Իսկ քիչ հետո տեսիլի մեկնաբանման միջոցով տրվում է հիշյալ սրբազան աշխարհագրության հիմնավորման քաղկեդոնական տեսակետը. «Ես այդ տեսա և շատ վախեցա, երբ լուսանման մի այր, բոցե թներով, ձայն տվեց ինձ և ասաց. «Մի՛ երկնչիր, Գրիգոր, լսի՛ր, ես բացատրեմ քեզ տեսիլքի նշանակությունը, քաղաքի (Արտաշատի – Ա. Ս.) մեջտեղում (տեսածդ) հրեղեն սյան տեղում կառուցվելու է կաթողիկե եկեղեցի (այն, ինչ կար Վաղարշապատում – Ա. Ս.). պատվական խաչը դա հովիվն է, որը վարդապետելու է ժողովրդին՝ հաստատելով մարդկանց համագո երրորդության հավատի մեջ» (§ 82): Ահա՛ իսկական կաթողիկեի ու խաչի տեղը և դերը նոր ընկալմամբ՝ ըստ քաղկեդոնական հայացքի: Այն, ինչ մայր Ագաթանգեղոսում «գիտական» մեկնաբանություն է ստանում (§ 741-752), նոր խմբագրության մեջ արժանանում է պարզունակ հովվական բացատրության. «Արյան գույն ունեցող երեք սյան խարիսխները, դրանք սուրբ կույսեր Հռիփսիմեն, Գայանեն և նրանց հետ եղողներն են, որոնք մարտիրոսացան, փառքի արժանացան և մեռնելով անմահացան: Սյուներն իրար ամրացնող երեք շղթաները դա նրանց հավատքն է, որը համագո երրորդության միջոցով արժանացրեց նրանց հաղորդակից լինել մեր Փրկչի և Աստուծո չարչարանքներին: Դրա համար էլ նրանց վրա երեք խաչ էր կանգնած, որ նշանակում է մարդկության համար (Քրիստոսի) հանձն առած խաչը, զի մարդիկ ևս, Քրիստոսի համար չարչարվելով, հաղորդակից դառնան չարչարանքներին և արժանանան (հավիտենական) կյանքին» (§ 82): Զգացվում է, որ հայ քաղկեդոնական վարդապետական լեզուն դեռ մանկական թոթովանքների փուլում է և նոր է սկսում իր առաջին քայլերը, բայց դա ուզում է անել ինքնուրույն, առանց օգտվելու ազգային եկեղեցու վարդապետական մտքի ճոխ պտուղներից:

2. Ն. Մառը, հետազոտելով և հրատարակելով (նաև ռուսերեն) Հայոց դարձի պատմության արաբական տարբերակը, նրանից քաղած ամենակարևոր տեղեկությունը՝ իբրև ցնցող նորություն, դարձրեց գրքի վերնագիր՝ «Մկրտություն հայոց, վրաց, արխազաց և ալանաց...» [3]: Մառը ուզում էր ցույց տալ ոչ միայն VII դ. տիրող հասարակական կարծիքը դարձի մասին, այլև վերականգնել IV դ. սկզբների պատմական իրողությունը: Դրան հակադարձեց Ստ. Մալխասյանցը՝ եզրակացնելով, որ այդ մասը արաբական տարբերակում հայտնվել է թարգմանիչ-խմբագրի ձեռքով՝ իբրև VIII դարից իշխող հանրային մտայնություն: Չէ՞ որ Մառի գտած արաբերեն բնագրում նշված ազգերը միասին գտնվում էին խալիֆաթի տիրապետության տակ: Հետևաբար՝ Մալխասյանցը ենթադրեց, որ հունարեն նախօրինակում պետք է որ այդ հատվածը չլինի: Հայտնվեց հունարեն «Վարքը», որ արաբական մեկնակերպի նախօրինակն էր, և պարզվեց, որ Մալխասյանցը սխալվել է. Տրդատն ու Գրիգորը դարձաբանական հերոսներ են Հայոց համար, բայց դարձի են բերել նաև հարևան ժողովուրդներին: Ինչո՞ւ է քաղկեդոնական խմբագրությունը VI դ. վերջին հարկ համարել, որ նշված չորս ազգերը դարձի գան միաժամանակ՝ Հայոց Տրդատ արքայի գլխավորությամբ: Արդյո՞ք այն պատճառով, որ Մորիկ կայսեր օրոք հայ քաղկեդոնական եկեղեցին միտում ուներ իր հովանու տակ առնելու ամբողջ տարածաշրջանը: Չէ՞ որ այդ ծրագրի հնարավոր հակառակորդը՝ Պարսից տերությունը, թուլացած էր Խոսրովի իշխանության սկզբին: Հենց այդ պատճառով էլ Մորիկ կայսրը ընդհանուր կաթողիկոսական իշխանություն էր խոստացել Մովսես Եղվարդեցուն, որպեսզի համընդհանուր եկեղեցադավանական նոր իշխանություն հաստատվի ոչ թե Հայոց կաթողիկոսարանին զուգահեռ, այլ նրա հիմքի վրա՝ որպես մեկ միասնական եկեղեցի: Ճիշտ է, Դվինի աթոռակալ Մովսեսը չհամաձայնվեց, բայց քաղաքական ծրագիրը օրակարգից չհանվեց. մեծ ծախսերի գնով կառուցվեց կաթողիկոսարան Դվինի հարևան Ավանում՝ որպես սպասվող քաղաքականության կայսերական հենարան: Ծրագրի մեկ այլ բաղադրիչ էր նաև քաղկեդոնական Մայր տաճարի անվանաբանությունը, որը, մերժելով «Էջմիածնության» գաղափարը, պետք է ընդունելի համարեր երկնային լույսի (շողի), կենսալույսի, կենաց լուսասյան (հրե սյան) էջքի գաղափարը: Դրա համար էլ, ինչպես նշվեց, Հայաստանում շատ հայտնի էր «Շողակաթ, իսկ Վիրքում՝ Ս. Կենացայուն (=Սվետի ցխովելի) անունը: Այս ծրագրի ոչ պակաս կարևոր մասն էին նաև ազգային Ազաթանգեղոսի քաղկեդոնական խմբագրության ստեղծումը և նրա մեջ համընդհանուր տարածաշրջանային եկեղեցու գաղափարական հիմնավորումը:

Լսենք այդ խմբագրության (ըստ հուն. «վարքի») կազմողի ձայնը. «...Տրդատ թագավորը (կույսերին ամփոփարաններում դնելուց հետո – Ա. Ս.), հասնելով Վաղարշապատ քաղաքը, հրապարակեց թագավորական հրամաններ... գրեց նաև Վրաց և Աղվանից թագավորներին և հայտնեց նրանց այն ամենը, ինչ իրենց հետ պատահեց, և որ պետք է նրանք շտապ կարգով ժամանեն» (§ 22): Արաբերեն թարգմանության մեջ, որը ևս հարաբերական ինքնուրույն գծեր ունի հունարենի համեմատ, մի թե վերջինս էլ՝ հայերենի նախօրինակի նկատմամբ, եղածի հետ նշվում է նաև Լազերի թագավորը: Բայց այս դեպքում կարելի է վստահ լինել, որ լազերի անունը հունարեն բնագրից ընկել է հետագայում, որովհետև մի այլ տեղ մկրտվածների թվում նշվում են չորս թագավորները միասին (§ 164):

Նույն բնագրի մի այլ հատվածից երևում է, որ Գրիգոր Լուսավորիչը առաջնորդներ է ուղարկում ոչ միայն Վիրքի և Աղվանքի, այլև Լազերի երկրի համար: Ի դեպ, այս հատվածում Սեբաստացվոց երկիրը շփոթմամբ հայտնվել է Վիրքի փոխարեն և ստացվել է, որ Վիրքի համար նախատեսված եպիսկոպոսը ուղարկվել է Սեբաստիա, այն դեպքում, երբ քիչ առաջ խոսվել է Սեբաստիո բնիկ եպիսկոպոս Պետրոսի մասին, որից ինքը՝ ս. Գրիգորն է կադրեր ստացել Մեծ Հայքի համար: «Սուրբ Գրիգորը եպիսկոպոսներ և երեցներ ձեռնադրեց և ուղարկեց Մեծ Հայքի բոլոր շրջանները: Սեբաստացվոց (պետք է կարդալ՝ «Վրաց») երկիրը ուղարկեց Իրինարքոս անվամբ երեցին և վանահորը... Քառասուն (մարտիրոսների) մասունքների գյուտի ժամանակ Սեբաստիայի եպիսկոպոսի պաշտոնն ունեցողի (խմբագիրը չի ուզում անունը տալ – Ա. Ս.) սարկավագն էր... Լազերի երկիրն (ուղարկվեց) Սոփրոնիոսը, սա երեց էր կապաղովկացի և սրբին հարողներից... Իսկ Աղվանք ուղարկվեց մի սրբազան մարդ՝ Թովման, որը ծագումով Սատաղ քաղաքից էր» (§ 170): Ինչպես պարզ երևում է, Սեբաստիան կարիք չունեի նոր առաջնորդի, բացի այդ էլ նա համագոր անդամ չէ՝ հարևան երկրների շարքում կանգնելու համար: Կարևորն այն է, որ խմբագիրը բոլոր նշված երկրների առաջին քահանաներին օժտում է հունական անուններով և սերված ու պատրաստված է համարում հունախոս միջավայրում: Հետևաբար՝ ավելորդ չէ առաջ ընկնել և, անտեսելով հետագա նմանատիպ տեղիները և վկայակոչումները, անել մի փոքրիկ ընդհանրացում այն մասին, որ ակնհայտորեն «Վարքի» հայերեն խմբագրի կողմից քաղկեդոնականի հետ նույնացվում են ամենայն հունականն ու հռոմեականը: Սա մի մտայնություն է, որը դեմ է պատմական հայացքին և ունի հատուկ խտրական միտում, ինչը պետք է հաշվի առնվի նաև գիտական հետազոտություններում:

Իր ժամանակին Ն. Մառը սույն բնագրի արաբերեն տարբերակը ուսումնասիրելիս քաղկեդոնական ծագման նշան է համարել ոչ միայն չորս թագավորների համատեղ մկրտությունը, այլև այն, որ բնագիրը պարունակող Սինայի ուղղափառ վանքի ձեռագիրը համարակալված է վրացերեն տառերով: Իհարկե, քաղկեդոնական լինելու փաստարկը հիմա կարող է ճիշտ համարվել ի շարս մյուս պատճառաբանումների, բայց լուրջ չի դիտվել, դրա համար էլ մերժվել է Ժ. Գարիտի կողմից: Ինչ վերաբերում է չորս թագավորների մկրտությանը, ապա Ն. Մառի մեկնաբանությունը նույնպես առարկության է արժանացել ն՛ Ժ. Գարիտի, ն՛ նրա հետևորդների կողմից. «Ն. Մառի այն վարկածը, թե Հայոց, Վրաց, Լազերի և Աղվանից հիշատակումը որպես մեկ ամբողջություն, VII դ. խզումից հետո կարող էր ընդունելի լինել միայն քաղկեդոնիտ հայի կողմից, նույնպես բավարար կովաններ չունի: Իսկ ինչու չենթադրել, որ հայկական կորած բնագրի հեղինակը չի ուզեցել այսպիսով շեշտել հենց Հայաստանեայց եկեղեցու գերակայությունը մյուս Կովկասյան եկեղեցիների նկատմամբ» ([2], էջ 162):

Հասկանալի է այժմ, որ Մառի մեկնաբանումն անհաջող է, բայց և վերոբերյալ հակադրությոն էլ լուրջ չէ, որովհետև խոր անցյալից մեզ հասած բնագրի քաղաքական ենթատողային իմաստները մի կողմ նետել և ասել «ինչու չենթադրել» հակառակը, պարզունակացնում է խնդիրը:

3. Հայ քաղկեդոնական խմբագիրը հատուկ վերաբերմունք է արտահայտում նաև տեղանունների հանդեպ: Օրինակ, նա օգտագործում է տեղանվան խորհրդանշական արժեքը:

Կեսարիայում Գրիգորին ձեռնադրելու համար տեղի առաջնորդ Ղևոնդիոս արքեպիսկոպոսը հրավիրում է շրջակա եպիսկոպոսներից, որպեսզի կատարեն ձեռնադրման ծեսը: Թվում է, թե դրա մեջ ոչինչ միտումնավոր չի կարող լինել, բացի այն, որ ծեսը կարող են վարել կապաղովկիական եկեղեցու կարգով, ինչպես կտրվի ստորև մեջբերմամբ: Սակայն, ո՛չ, պարզվում է, որ հրավիրված եպիսկոպոսների շարքում է նաև Կեսարիայից ամենահեռու կետում գտնվող Քաղկեդոն քաղաքի մետրապոլիտը:

«Արքեպիսկոպոս Ղևոնդիոսը ոմանց ուղարկեց մինչև Բութանիայի Քաղկեդոն՝ իրեն ենթակա եպիսկոպոսներին և մետրապոլիտներին հրավիրելու...» (§ 133): Ուրիշ ոչ մի տեղանուն չի նշվում քսան հոգի կանչելու համար, ուստի պետք է հասկանալ, որ խմբագիրը հատուկ նշում է Քաղկեդոնի սիմվոլիկ դերը:

Ինչ վերաբերում է նրան, թե արդյո՞ք քաղկեդոնական միտում կա նաև Կեսարիայի և նրա ծեսի հիշատակման մեջ. «... Սրբին բեմ բարձրացրին և, բացելով սուրբ ավետարանը, դրին վկա և խոստովանող

Գրիգորի վրա, նրանք բոլորը իրենց սուրբ ձեռքերը դրին նրա վրա և կարդացին ընդունված աղոթքը, ապա նրա ուսին գցեցին եմփոռոնը և ասացին. «Արժանի՛, արժանի՛, արժանի՛»: Նրանք պատարագեցին՝ ընթերցելով սուրբ ավետարանի ընթերցվածը. «Ես եմ հովիվը բարի» և շարունակությունը: Սաղմուսերգությունից հետո բոլորը ողջունում էին վկային» (§ 145): Ճիշտ է, մի լուրջ շեղում չկա հայկական «Մաշտոց»-ից, բայց երևում է, որ այն քահանայական է: Մրանից հետո վարքը պատմում է, որ Ղևոնդ արքեպիսկոպոսը նամակ է հղում Տրդատին՝ հետևյալը գրելով. «Ընդունե՛ք ուրեմն հովվին բարի և ուսուցչին իմաստուն՝ քահանայապետին» (§ 150): Իսկ սրանից հետո Գրիգորը Ղևոնդ հայրապետից ընդհանրական թղթով գալիս է Սեբաստիոս սրբազան եպիսկոպոս Պետրոսի մոտ, որպեսզի «սուրբ կանոնների համաձայն իրեն աթոռակալ նշանակե» (§ 153):

Փաստորեն ստացվում է, որ ձեռնադրվելուց հետո սրբազան Պետրոսը պետք է Գրիգորին աթոռակալ նշանակի Հայքում, մի բան, որ հետագա շարադրանքում մոռացվում և բաց է թողնվում: Պետրոսն ընդամենը ուղեկցում է Գրիգորին մինչև Հովհաննես Մկրտչի և Աթանազիոսի մասունքների ամփոփումը Աշտիշատում և Տրդատի, թագուհի Աշխենի և քույր Խոսրովի դուխտի ու հարևան երեք թագավորների (վրաց, լազերի, աղվանից) դիմավորումը, հավանաբար Բագավանում, որտեղից էլ ճանապարհեցին հետ: Այստեղ խմբագրի ամենակարևոր ասելիքն այն է, որ մինչև այդ հայ եկեղեցում ձեռնադրված և՛ պաշտոնավարած քահանաները, և՛ եպիսկոպոսները օրինական են, որովհետև բոլորի իշխանությունը բխում է ս. Գրիգորից, իսկ վերջինիս ձեռնադրումն ու աթոռակալումը վավերացվել են Կեսարիայում: Ի դեպ, Սեբաստիայի Պետրոս եպիսկոպոսի հիշատակումը ևս այդ միտումի նշան է: Թեկուզ հնարավոր է, որ թարգմանիչն է բաց թողել Գրիգորին Հայքում աթոռակալ նշանակելու դրվագը:

4. Որքան էլ խմբագիրը «Վարքում» ներկայացնի իրենից 300 տարի առաջ եղած պատմություն, միևնույն է, նա ավելի շատ արտացոլում է իր ժամանակի իրողությունները: Այս բանում թեև արդեն քանիցս համոզվեցինք, բայց արժե բերել ևս մի օրինակ՝ ցույց տալու, որ կարևորը իր ժամանակի իրականությունն է, ոչ թե անցյալի, եթե անգամ ներկայի տվյալ իրողությունը այդքան էլ հաճելի չէ մայր Ազաթանգեղոսի համեմատ, որովհետև սա այն դեպքն է, երբ անցյալին վերագրվածը պետք է գործի ներկայում: Խոսքը վերաբերում է հողահատկացմանը, այսպես կոչված «հող երդոյ» երևույթին:

Ըստ մայր Ազաթանգեղոսի՝ Տրդատի հրամանով հայոց ազարակատեղերում ծառայող քահանաները, կենցաղային կարիքները հոգալու համար, ստացան չորսական հողաբաժիններ (հող երդոյ), իսկ ավան-

ներում ծառայողները՝ յոթական (§ 837): Իսկ ըստ «Վարքի» խմբագրի՝ Տրդատ արքան «յուրաքանչյուր մեծ գյուղում առանձնացնում էր հինգ «տանուտերություն» (հող երդոյ), փոքր (գյուղերում)՝ երեք» (§ 191):

Պարզ երևում է, որ Պապ թագավորը, անկախ նրանից, թե որքան էր IV դ. սկզբում եկեղեցու հողահատկացումը, ժամանակին կրճատել է՝ հողաբաժինները հասցնելով երկուականի, իսկ մնացյալը «յարքունիս գրավել»: «(Պապ թագավորը – Ա. Ս.) յեթն հողոյն զհինգն հատանէր յարքունիս և զերկուսն միայն թողոյր»([4], գլ. ԼԱ, էջ 353): Հետո Սահակ Պարթևի կարգավորումների արդյունքում մեծ բաժնի թիվը աճել է՝ դառնալով չորս: Որտեղի՞ց է հայտնի, որովհետև եթե Պապը մեծ ու փոքր բաժինները հավասարեցրեց երկուսի (թեկուզ ասվում է միայն մեծի մասին), իսկ Սահակ կաթողիկոսը թագավորական գահի վերացումից առաջ մեծ քահանաների բաժինը երկուսով ավելացրեց, նշանակում է ստացվեց 2 և 4: Ավելի ուշ վարքի հայերեն նախօրինակը կազմողը գրում է, թե իբր Տրդատի օրոք ազարակներում ծառայող քահանաներն ստացան երեք բաժին, իսկ ավաններում՝ հինգ բաժին հողաերդեր, մայր Ազաթանգեղոսի 4:7-ի փոխարեն: Հայտնի չէ, թե հայերենի տվյալը որքանով է հավաստի, համենայն դեպս դա պետք է համարել գոնե եղած ցանկության արտահայտում կամ անցյալի եկեղեցական իրավիճակի իդեալականացում: Նույն կերպ պետք է ընկալել «Վարքի» տվյալը՝ 3 և 5: Այսինքն, խմբագիրը, դրանով իդեալական վիճակ տեսնելով անցյալի հողահատկացման մեջ, անուղղակի խոստում է տալիս, որ հայ քաղկեդոնական եկեղեցում ծառայող քահանաները կստանան նույնքան հողեր: Պատահականորեն և՛ «Վարքի», և՛ Սահակ Պարթևի կանոնի նշած հողահատկացումների տարբերությունը հավասար է երկուսի, ինչն էլ շփոթեցրել է բազմափորձ բանասերին՝ կարծել տալով, որ Սահակի կանոնը հետևել է «Վարքին», իսկ, ըստ նույն բանասերի, «Վարքը» գրվել է IV դ. հունարեն, Սահակից առաջ ([5], էջ 205-213):

Իրականում «Վարքը» VI դ. վերջի խմբագրությունն է, իսկ նրա հողահատկացման տվյալը սոսկ խոստում է՝ հայ քահանաներին դեպի քաղկեդոնականություն քաշելու նպատակով:

Իսկ Սահակ Պարթևի հողային կանոնը կոչված է եղել բարեփոխելու Պապի կողմից հաստատված կարգը միայն հոգուտ ավանային մեծ բնակավայրերի քահանաների: Ահա՛ «Կանոնք սրբոյն Սահակայ Հայոց հայրապետի» կանոնախմբի ԺԹ հոդվածը. «Եւ զլիաւոր քահանայ հանապազորդ յեկեղեցւոջ ի գործ կալ՝ Բերդ աւելի առցէ, քան իւր ընկերս, թէ զհւղ մեծ իցէ» ([5], էջ 378):

Պետք է ենթադրել, որ Պապի հողային կարգը VI դ. վերջերին դեռ գործում էր Արևմտյան Հայաստանում, ի տարբերություն Արևելյանի,

որտեղ V դ. 20-ական թվականներին այն բարեփոխվեց ըստ Սահակի: Արդյո՞ք Մորիկ կայսեր օրոք Հովհան Բագավանցին հասցրել էր նոր սահմաններով գծված Արևմտյան Հայաստանում եկեղեցապատկան հողերի բարեփոխում անցկացնել, դժվար է ասել: Համենայն դեպս դրա հնարավորությունը շատ ակնառու և սպասելի էր Մորիկի վարած «հայկական» քաղաքականության համատեքստում:

5. Վերջապես «Վարքի» հիշատակարանային ավարտի մասին: Մայր Ազաթանգեղոսը վերջում (§ 892-896), ս. Գրքի օրինակով արդարացնելով սրբի վարքը գրելու նպատակը, § 897-ում հեղինակի անունից վկայում է հետևյալը. «... ոչ էթէ ի հին համբաւուց տեղեկացեալ և մատենագրեալ զայս կարգեցաք, այլ որոց մեզէն իսկ ականատեսք եղեալ կերպարանացն և առնթերակաց հոգևորական գործոցն և լսողք շնորհապատում վարդապետութեանն, և նոցին արբանեակք ըստ աւետարանական հրամանացն: Ոչ սուտապատում ճարտարախօս եղեալ առ ի մերոց բանից, այլ զյաճախագոյնն թողեալ և ի նշանաւոր գիտակաց քաղելով՝ զհամառօտն կարգեցաք» (էջ 470): Իսկ նախավերջին § 899-ում գրում է. «... որդիք որ ծնանին՝ յարիցեն և պատմեսցեն որդոց իւրեանց, զի դիցեն Աստուած զոյս իւրեանց, ... զի մի՛ էղիցին իբրև զհարս իւրեանց (հեթանոսք – Ա. Ս.):

«Վարքի» խմբագիրը գրում է. «Իմ այս ամբողջ շարադրանքը ճշմարիտ է, քանզի ես դեպքերի մի մասի մասնակիցն եմ և ականատեսք: Մյուսների մասին լսել եմ վստահելի մարդկանցից: (Շարադրեցի) որպեսզի մեզանից հետո եկողները տեղի ունեցած բարի և առաքինի գործերով սովորեն բարեպաշտությունը, որպեսզի մենք կենդանի Աստծուն հաճելի լինենք, քանզի նրանն է փառքն ու իշխանությունը հավիտյանս հավիտենից, Ամեն» (§ 199):

Նույնը ունի նաև արաբերեն «Վարքը». «Գրեցի, եւ զայս ստուգիւ է, զի ես ինքն վկայ եւ ականատես եղէ, և է զի լուայ ի հաւատարիմ արանց» ([3], էջ 82):

Ինչպես տեսնում ենք, առաջին մեջբերման մեջ հեղինակային առաջին դեմքով հիշատակարան թողնելը տարակուսանք չի թողնում, որովհետև նա առաջաբանից արդեն հայտնի է իր անունով՝ Ազաթանգեղոս, որը գրում է Տրդատ արքայի պատվերով:

Իսկ երկրորդ և երրորդ մեջբերումներում հիշատակարանը տարակուսելի է, թե ինչու է I դեմքով գրում և իր նպատակադրումը ներկայացնում: Չէ՞ որ նա անհայտ ու անանուն է: Օրինաչափ կլիներ, եթե բազմաթիվ սրբագրական երկերի նման այս ևս ներկայանար միայն վերնագրով, առանց հեղինակի և, առավել ևս, հեղինակային բացատրությունների: Իրականում այդպես չէ: «Վարքի» հիշատակարանային ավարտը հուշում է, որ հայերեն նախօրինակում այն ևս ունեցել է

առաջաբան, հեղինակի անուն և պատվիրատուի հիշատակում: Այլապես իմաստ չէր ունենա այդ իսկ հեղինակի վերջաբանը: Նշանակում է հունարեն թարգմանիչը կամ գրիչ-խմբագիրը, որը վարքը ներառել է ժողովածոյի մեջ, բաց է թողել հեղինակային առաջաբանը, որովհետև հույն ընթերցողին հետաքրքիր չի համարել և երկը դարձրել է անանուն, բայց և մոռացել կամ վրիպել է նույնկերպ վարվել նաև վերջում:

Եվ իսկապես, մեզ հայտնի բոլոր օտարալեզու թարգմանությունները, որոնք ներկայացված են ոչ թե իբրև դարձաբանական պատմություն, այլ իբրև վարք-վկայաբանություն, չունեն Ագաթանգեղոսի անունը՝ իբրև հեղինակ:

Վերոնշյալ տարբերությունները, որոնք մայր Ագաթանգեղոսի համեմատ դիտվում են «Վարքի» մեջ, կարելի է հանգեցնել ոչ այնքան դավանաբանական, տվյալ դեպքում քաղկեդոնական, որքան քաղաքական նպատակադրումների, տվյալ դեպքում՝ Հայքում քաղկեդոնական եկեղեցի հաստատելու միջոցով Բյուզանդիայի իշխանության ազդեցությունն ապահովելու նպատակին: Երևի չկա մի պարբերություն, որ անմասն լինի այդ անտեսանելի միտումից: Անգամ վերջաբանը հետագա սերունդներին կոչ է անում Գրիգորի գործերով սովորել բարեպաշտություն, որը «Վարքի» մեկնաբանմամբ, հավանաբար, պետք է հասկանալ քաղկեդոնական իմաստով:

Այսպիսով, առաջին անգամ հայոց պատմության մեջ «յօրինակին» «Վարքի» գործ ունենք հայ քաղկեդոնական մշակույթի մի ծավալուն երկի հետ, որը հայերեն ստեղծվել է VI դարի վերջին տասնամյակին՝ Հովհան Բագավանցի կաթողիկոսի պատվերով կամ խմբագրությամբ, VII դ. սկզբին թարգմանվել է համառոտաբար հունարեն, սրանից էլ մասնակի փոփոխմամբ՝ արաբերեն VIII-IX դդ. սահմանին:

Հայ քաղկեդոնական ճարտարապետական կոթողների կողքին դրվող գրավոր երկերը՝ հունարենով պահպանված «Վարքը» և «Նարբացիոն», ինչպես նաև որոշ պատմագրական տվյալներ, օգնում են պատկերացում կազմելու հետագա մի քանի դարերի ընթացքում կուտակված այն հարուստ մշակութային ժառանգության մասին, որից հեշտորեն հրաժարվում էր Հայ առաքելական եկեղեցին՝ թողնելով այդ արժեքները և դրանց ստեղծող ժողովրդին բախտի քմահաճույքին, ավելի ճիշտ, թողնելով, որ ժողովուրդը հունականացվի և վրացականացվի և արժեքների հետ միասին տնօրինվի հույն և վրաց հոգևորականների կողմից, ինչն էլ հետագայում առիթ տվեց ավելորդ բանավեճերի և հակագիտական պնդումների՝ դրանց ծագման և պատկանելության հարցով:

Վերջում մեկ անգամ ևս նշենք, որ հայ եկեղեցու հիմնադրման և հայոց դարձի սրբազան պատմության քաղկեդոնական տարբերակը ևս հայերենում կոչվել է Ագաթանգեղոս կամ Գրիգորիսի գիրք, որովհետև այդ անունն արդեն ուներ բարձր վարկանիշ: Հարկավոր էր ցույց տալ, որ իսկական Ագաթանգեղոսը նոր խմբագրությունն է, որը ստուգապես ծնունդ է առել IV դ. սկզբի գործիչ, ականատես դպիր Ագաթանգեղոսի հավաստի շարադրմամբ: Քաղկեդոնական պատվիրատուն ու խմբագիրը ևս չգիտեին, որ Ագաթանգեղոսը Պատմության հերոսի մակդիր-կոչումը կամ ֆունկցիոնալ անունն է, հետևաբար հենց ինքը՝ Գրիգորը: Տարբեր մասնագետներ տարբեր կերպ են պատկերացրել այդ նույնացումը (օր՝ Ալբ. Մուշեղյանը դա ցույց է տվել երկու վերնագրերի գոյությամբ. մեկը՝ առաջաբանի («Ագաթանգեղեայ Պատմութիւն»), մյուսը՝ բուն պատմության, որի (կրկնվող) նույնական վերնագրի տակ գրված է՝ «Վարք եւ Պատմութիւն սրբոյն Գրիգորի» (§ 18), [4]: Ի դեպ, հենց մտաւոր նման գրությամբ էլ մեզ է հասել հունարեն Վարքի վերնագիրը՝ «Վարք և վկայաբանութիւն Մեծ Հայքի սուրբ և փառավորեալ Գրիգոր վկայի»: Սա նշանակում է, որ մեզ հասած «Վարքը» բաց է թողել առաջաբանը՝ առաջին վերնագրի հետ միասին: Հունարեն «Վարքի» հայերեն նախօրինակը՝ Ագաթանգեղոսի անունով, ավաղ, կարճ կյանք է ունեցել՝ կապված հակաքաղկեդոնական հայ եկեղեցու հաղթանակի հետ Հովհան Օձնեցու օրոք: Հետևաբար՝ հայերեն «Վարքը» կարող էր ձեռագրային շրջանառությունից դուրս մղվել VIII դարում, նույնը և, ի դեպ, «Նարրացիոն» և մյուս մեզ անհայտ քաղկեդոնական գրավոր երկերը, որոնք պարտադիր չէր, որ լինեին դավանաբանական բնույթի, դուրս մղվելու համար բավական էր, որ դրանք ծագումով, վարչական կիրառմամբ կամ որևիցե այլ հանգամանքով կապված լինեին քաղկեդոնական շրջանակների հետ:

«Մատենադարան», Մեսրոպ Մաշտոցի անվ. հին
ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ
e-mail: artsruni.sahakyan@gmail.com

Ա. Ս. Սահակյան

Ագաթանգեղոսի քաղկեդոնական տարբերակը

VI դ. վերջին տասնամյակում բյուզանդական կայսերական հովանու ներքո Հովհաննես Բագավանցու գլխավորությամբ ստեղծվում է հայ քաղկեդոնական եկեղեցին՝ Ավանի մայր տաճարով (Երևանի մոտակայքում): Ի հակադրություն Վաղարշապատ-Դվինի եկեղեցու նոր եկեղեցին կազմում է Ագաթանգեղոսի նոր

խմբագրություն՝ ցույց տալու, որ հայ քաղկեդոնականների դարձի և նրանց եկեղեցու հիմնադիրը Գրիգոր Լուսավորիչն է:

Նոր խմբագրությունը VI-VII դդ. սահմանին թարգմանվում է հունարեն և XX դ. կ ե ս ե թ ի ն հայտնաբերվում Ժ. Գարիտի կողմից («Վարք»), իսկ VIII-IX դդ. թարգմանվում է հունարենից արաբերեն, որն էլ հայտնաբերվում է Ն. Մարտի կողմից XX դ. ս կ զ ր ի ն :

А. С. Саакян

Халкедонская версия Агафангела

Армянская халкедонитская церковь была образована в последнем десятилетии VI в. под покровительством императора Византии. Главой ее стал Иованнес Багаванци, а кафедральный собор находился в Аване близ Еревана. Новая церковь в противовес церкви Вагаршапата-Двина создает собственную редакцию Агафангела с целью доказать, что основателем армянской халкедонитской церкви был Григорий Просветитель.

Новая редакция Агафангела, на рубеже VI–VII вв. переведенная с армянского на греческий, в середине XX в. была обнаружена Ж. Гариттом («Житие»), а ее перевод с греческого на арабский, сделанный в VIII–IX вв., обнаружен Н. Марром в начале XX в.

A. S. Sahakyan

The Chalcedon Version of Agathangelos

In the last decade of the 6th c. AD, an Armenian Chalcedonian church was created under imperial patronage headed by Hovhannes Bagavantsi – with a cathedral in Avan near Yerevan. The new church, in opposition to Dvin, created its own edition of Agathangelos to prove that the founder of the Armenian, Georgian, Albanian and Laz churches was Gregory the Illuminator.

The new edition was translated from Armenian into Greek (“Hagiography”) at the border of the 6th-7th cc. AD, which was discovered by G. Garitte. It was translated from Greek into Arabic in the 8th-9th cc. and was found by N. Marr at the beginning of the 20th c.

Գրականություն

1. *Gérard Garitte*, La Narratio de rebus Armeniae, edition critique et commentaire, Corpus Scriptorum Christianorum Orientalium, vol. 132, Subsidia tome 4, Louvain, 1952.
2. *Բարթիկյան Հ.*, «Ազաթանգեղոսի պատմության հունական նորահայտ խմբագրությունը (վարք)» բնագրի թարգմանություն, առաջաբանը և ծանոթագրությունները *Ս. Տեր-Ղևոնդյանի*: «Հ. Բարթիկյան, Հայբյուզանդական հետազոտություններ», հ. 1, Եր., 2002, 882 էջ:

3. Ման Ն., Մկրտություն հայոց, վրաց, արխազաց եւ ականաց ի Սրբոյն Գրիգորէ, Էջմիածին, 1911:
4. Փալստոս Բուզանդ, Պատմութիւն Հայոց, Երևան, 1987:
5. Մուշեղյան Ալբ., Ազաթանգեղոսի Պատմությունը, ստեղծման հանգամանքները, գրության ժամանակը և հեղինակի հարցը, ՊԲԽ, 2012, № 1 (189), էջ 205-213:
6. Կանոնագիրք Հայոց, աշխ. Վ. Հակոբյանի, Երևան, 1964, էջ 378: